ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԻՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ (ՎՃԱՐՈՒՄ) 2

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ 3

2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ 3

ՀՀ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ 4

ՀՀ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ 4

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 4

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

- ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ ՉՁԵՎԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ 7
- ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՃԱՆԱՉՄԱՆ) ՄԵԹՈԴՆԵՐԸ 8
- ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ 8
- ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԲՆԱՄԹԵՐԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ 8

3. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ՀԱՐԿԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԱՃԵՑՈՒՄՆԵՐԸ, ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ (ԾԱԽՍԵՐԸ)

5% ԴՐՈՒՅՔԱՉԱՓ 9

10% ԴՐՈՒՅՔԱՉԱՓ 10

20% ԴՐՈՒՅՔԱՉԱՓ 10

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԱՃԵՑՈՒՄՆԵՐԸ 11

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ 11

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ 13

1. ԻՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ (ՎՃԱՐՈՒՄ)

Եկամտային հարկը՝ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող պետական հարկի տեսակ է:

Եկամտային հարկը հաշվարկվում է ֆիզիկական անձի հարկվող եկամտի (եկամուտների) նկատմամբ, որը որոշվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում տվյալ անձի ցանկացած հիմքով ստացված եկամուտների (այդ թվում՝ բնամթերային ձևով) և նվազեցվող (չհարկվող) եկամուտների դրական տարբերություն:

Նվազեցվող եկամուտներ են համարվում այն եկամուտները, որոնք ենթակա չեն հարկման եկամտային հարկով:

Այն ֆիզիկական անձը, որը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ նոտար՝ եկամտային հարկը վճարում է միայն իր անձնական հարկվող եկամուտներից (այսինքն՝ ձեռնարկատիրական և նոտարական գործունեությունից ստացվող եկամուտներ չհամարվող եկամուտներից):

Եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտավորությունը կատարում է ֆիզիկական անձին եկամուտ վճարող՝ ՀՀ հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը (այսուհետ՝ հարկային գործակալ):

Ֆիզիկական անձը եկամտային հարկը հաշվարկում (վճարում) է ինքնուրույն, եթե՝

→ ստանում է հարկվող եկամուտ հարկային գործակալ չհանդիսացող անձից.

կամ

→ ֆիզիկական անձին հարկվող եկամուտ վճարող հարկային գործակալը ազատված է հարկը հաշվարկելու (պահելու) և վճարելու պարտավորությունից:

Ֆիզիկական անձը (անչափահաս ֆիզիկական անձի դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) ինքնուրույն հաշվարկում և վճարում է եկամտային հարկը՝ հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացվող հետևյալ հաշվարկների հիման վրա՝

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ

կամ

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

Եկամտային հարկը հաշվարկվում է տարբեր դրույքաչափերով, ինչը պայմանավորված է ֆիզիկական անձի ստացած հարկվող եկամտի (եկամուտների) տեսակից:

Ֆիզիկական անձի կողմից հաշվարկները սահմանված ժամկետներում չներկայացնելու, հարկը չվճարելու համար կիրառվում են պատասխանատվության նորմեր:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

ՀՀ-ում 2023-2025թթ.-ի ընթացքում ներդրվող ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի շրջանակներում՝ բացառապես ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները (բացառությամբ անչափահասների) պարտավոր են հայտարարագրել իրենց կողմից ստացված բոլոր եկամուտները (այդ թվում՝ նվազեցվող (չհարկվող) և հարկային գործակալի կողմից վճարված)՝ հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելով

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

Հաշվարկը (Հայտարարագիրը) ներկայացվում է նաև այն դեպքում, երբ ֆիզիկական անձը տվյալ տարում որևէ եկամուտ չի ստացել:

Բացի եկամուտների հայտարարագրումից, Հաշվարկի (Հայտարարագրի) ներկայացումը հնարավորություն է տալու ֆիզիկական անձանց որոշակի դեպքերում ստանալ սոցիալական կրեդիտներ (հարկի վերադարձ) կրթության և առողջության ապահովագրության գծով կատարված ծախսերի (սոցիալական ծախսերի) մասով:

Եկամուտների հայտարարագրման գործընթացը ներդրվելու է երեք փուլով՝ 2023, 2024 և 2025 թվականներին, ինչը պայմանավորված է հայտարարատու հանդիսացող անձանց խմբերի հետ:

Ֆիզիկական անձի կողմից Հաշվարկը (Հայտարարագիրը) հարկային մարմին ներկայացվում է էլեկտրոնային եղանակով:

Հաշվարկը (Հայտարարագիրը) լրացվում է ֆիզիկական անձի կողմից ինքնուրույն: Ընդ որում, Հաշվարկ (Հայտարարագրի) որոշ բաժիններ լրացվում են ինքնաշխատ եղանակով (ավտոմատ):

2023թ.-ի և 2024թ.-ի հաշվետու տարիների համար եկամտային հարկի Հաշվարկը (Հայտարարագիրը) չեն ներկայացնելու այն անձինք, որոնց վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա (գաղտնի) տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող (գաղտնի)՝ հարկվող եկամուտների մասով:

Ֆիզիկական անձի կողմից Հաշվարկ (Հայտարարագիրը) սահմանված ժամկետներում չներկայացնելու համար կիրառվում են պատասխանատվության նորմեր:

2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ

Ֆիզիկական անձը կարող է հանդիսանալ.

ՀՀ քաղաքացի – ՀՀ օրենսդրությանը համապատասխան ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած անձ:

Օտարերկրյա քաղաքացի – ՀՀ քաղաքացիություն չունեցող անձ, որն ունի այլ պետության քաղաքացիություն:

Քաղաքացիություն չունեցող անձ – ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիություն չունեցող անձ, որը չունի այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** Եթե ֆիզիկական անձն երկքաղաքացի է, ապա այդ անձը ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի:

ՀՀ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ

ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ է համարվում այն անձը, որը հարկային տարում ՀՀ-ում փաստացի գտնվել է 183 և ավելի օր: Հարկային տարին՝ որևէ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածն է:

ՀՀ-ում փաստացի գտնվելու ամբողջական օրեր են համարվում նաև ՀՀ ժամանելու և ՀՀ-ից մեկնելու օրերը՝ անկախ այդ օրերի ընթացքում ֆիզիկական անձի՝ ՀՀ-ում փաստացի գտնվելու ժամերի քանակից:

Ռեզիդենտ ֆիզիկական անձ է համարվում նաև՝

- այն անձը, որի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում: Կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե ՀՀ-ում է գտնվում նրա տունը կամ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:
- ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** Եթե ֆիզիկական անձը հարկային տարվա որևէ օրվա դրությամբ համարվում է ռեզիդենտ, ապա այդ անձը համարվում է ռեզիդենտ ամբողջ հարկային տարվա համար:

ՀՀ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ

ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ է համարվում այն անձը, որը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** Միջազգային կանոններին համապատասխան, ֆիզիկական անձի ռեզիդենտության որոշման չափանիշները սահմանվում են տվյալ պետությունների ներքին օրենսդրություններով: Միաժամանակ, կարող են լինել դեպքեր, երբ նույն ֆիզիկական անձը հանդիսանա միանգամից երկու պետության ռեզիդենտ: Նշված դեպքերում, ֆիզիկական անձին առաջարկվում է դիմել տվյալ պետությունների իրավասու մարմիններին, որոնք հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով՝ միջազգային կանոններով որոշվող առաջնահերթությունները:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ֆիզիկական անձի հարկվող եկամուտը որոշվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում ցանկացած հիմքով ստացված եկամուտների (այդ թվում՝ բնամթերային ձևով) և նվազեցվող (չհարկվող) եկամուտների դրական տարբերություն:

Ֆիզիկական անձն եկամուտները կարող է ստանալ՝

- ՀՀ աղբյուրներից.
- ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից:

Ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ հարկվող եկամուտը ձևավորվում է ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտներից:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ հարկվող եկամուտը ձևավորվում է բացառապես ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներից:

ՀՀ աղբյուրների թվին են դասվում՝

- Աշխատավարձը (աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները), որը ստացվում է ռեզիդենտ հարկ վճարողների և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի շրջանակներում:

- Քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ծառայության մատուցումից կամ աշխատանքի կատարումից ստացվող եկամուտը, եթե այդ պայմանագրերը կնքվել են ռեզիդենտ հարկ վճարողների և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների հետ:

- Ռոյալթին, որը ստացվում է ռեզիդենտ կազմակերպությունից, ոչ ռեզիդենտի մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից):

- Շահաբաժինը, որը ստացվում է ռեզիդենտ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) կամ ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված համատեղ գործունեությունից:

- Տոկոսը, որը ստացվում է ռեզիդենտ կազմակերպությունից կամ ոչ ռեզիդենտի մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից):

- Վարձակալական վճարը, որը ստացվում է՝
  - ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույքի տիրապետման և (կամ) օգտագործման իրավունքի (վարձակալության) տրամադրման դիմաց:
  - շարժական գույքի վարձակալության տրամադրման դիմաց, եթե վարձակալության պայմանագրի կնքման պահին շարժական գույքը (բացառությամբ՝ օդանավերի) գտնվում է ՀՀ տարածքում.
  - շարժական գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում, եթե շարժական գույքը (բացառությամբ՝ օդանավերի) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է (ենթակա է գրանցման) ՀՀ-ում:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** Անշարժ գույքի վարձակալության գործարքի հետ կապված, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված գործարքը կհամարվի ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, եթե՝
>
> - անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում,
> - ֆիզիկական անձն անշարժ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից չի հաշվարկել եկամտային հարկը,
> - անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ այդ իրավունքի փաստացի ծագման օրվան հաջորդող 5 օրյա ժամկետում ֆիզիկական անձը հարկային մարմին չի ներկայացրել հայտարարություն: (Հայտարարության ձևը և լրացման կարգը հաստատված է ՀՀ ՊԵԿ նախագահի 01.12.2023թ.-ի N 1263-Ն հրամանով):

Վերը նշված՝ ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտների տեսակներից բացի, ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտ են համարվում բոլոր այն եկամուտները, որոնք ֆիզիկական անձը ստանում է ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից, անհատ ձեռնարկատիրոջից և նոտարից:

Եթե հնարավոր չէ այլ եկամուտը վերագրել ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներին, ապա այդ եկամուտներն ամբողջությամբ համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ:

Ֆիզիկական անձի նվազեցվող եկամուտներ են համարվում այն եկամուտները, որոնք ենթակա չեն հարկման ՀՀ-ում եկամտային հարկով:

Նվազեցվող եկամուտների թվին են դասվում՝

- Նպաստները, կենսաթոշակները.
- Ապահովագրական հատուցումները, բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով՝ ապահովագրական հատուցումների հաշվին ստացված գումարները.
- Պետական բյուջեից ստացվող կուտակային հատկացումների լրացուցիչ միջոցները, կուտակային հատկացումների կառավարման հաշվին ստացվող եկամուտները (տոկոսները).
- Զինծառայողների բնամթերային եկամուտները և պարտադիր ժամկետային զինծառայողների դրամական ապահովությունը, զոհված և հաշմանդամ զինծառայողների համար միանվագ վճարները.
- Սոցիալական օժանդակությունները, ալիմենտները, դոնորությունից եկամուտները.
- Աշխատողներին տրվող փոխհատուցման վճարները.
- Ժառանգությամբ և (կամ) նվիրատվությամբ ստացվող գույքը և դրամական միջոցները.
- Ոչ առևտրային կազմակերպություններից անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները.
- ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից անհատույց ստացվող եկամուտները.
- Սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները.
- Կրթաթոշակները, վնասի փոխհատուցումները, վարկերը և փոխառությունները.
- Աշխատողի կամ աշխատողի ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ օգնությունը.
- ՀՀ հավաքականի կազմում ստացվող մրցանակները.
- Շահումները, մրցանակները, պարգևները.
- Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից ստացվող ավանդի հատուցումը.
- ԽՍՀՄ խնայբանկում և ՀԽՍՀ բանկում ներդրած դրամական ավանդների փոխհատուցումը.
- Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով վերցված գույքի դիմաց ստացվող եկամուտները.
- Առողջության ապահովագրավճարները.
- Միասնական հաշվից վերադարձման ենթակա գումարների նկատմամբ հաշվեգրվող տույժերը.
- Մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելու գործունեությունից ստացվող եկամուտները.
- Ինքնավար էներգաարտադրողի ստացվող փոխհատուցումները.
- Գյուղարտադրանքի օտարումից ստացվող եկամուտները.

- Արժեթղթերից եկամուտները.
- Հատուցման հիմնադրամից ստացվող հատուցումները.
- Հողամասի օտարումից եկամուտները.
- Ոսկու շուկաներում վաճառված թանկարժեք մետաղների և քարերի վաճառքից եկամուտները.
- Վարկի գումարների ներման արդյունքում ստացվող եկամուտները.
- Թրեյդ-ին առևտրի շրջանակներում ավտոտրանսպորտային միջոցի օտարումից եկամուտները.
- Գույքի օտարումից բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտները:

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ ՉՁԵՎԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

Ֆիզիկական անձի հարկվող եկամուտ չի ձևավորվում (չի առաջանում), եթե հաշվետու ժամանակաշրջանում (ամիս կամ տարի)՝

- Ֆիզիկական անձը որևէ եկամուտ չի ստացել.
- Ֆիզիկական անձը ստացել է բացառապես նվազեցվող եկամուտ.
- ՀՀ վավերացված միջազգային պայմանագրի (համաձայնագրի, կոնվենցիայի) կարգավորումներին համապատասխան՝ ֆիզիկական անձին վճարվող եկամուտները ազատված են եկամտային հարկից.
- Ֆիզիկական անձի եկամուտները՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի ձեռնարկատիրական կամ նոտարական գործունեության արդյունք են.
- ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի եկամուտները՝ որպես ՀՀ-ում մշտական հաստատության գործունեության արդյունք են կամ վերագրվում են մշտական հաստատությանը.
  - Մշտական հաստատություն է համարվում՝ Օրենսգրքով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հարկային մարմնում հաշվառված ՀՀ-ում գործունեության վայրը, որի միջոցով ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:
- ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի եկամուտները ստացվում են արտաքին տնտեսական գործունեությունից:
  - Արտաքին տնտեսական գործունեություն (ԱՏԳ) է համարվում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ռեզիդենտին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը ՀՀ տարածքում փոխանցվելու հանգամանքից:
  - ԱՏԳ-ի թվին է դասվում նաև՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՃԱՆԱՉՄԱՆ) ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ֆիզիկան անձի եկամուտների հաշվառումը (ճանաչումը), ելնելով եկամտի տեսակից, կատարվում է երկու մեթոդների հիման վրա: Դրանք են՝ եկամուտների հաշվառման դրամարկղային և հաշվեգրման մեթոդները:

→ Հաշվեգրման մեթոդ.

Հաշվեգրման մեթոդը նշանակում է, որ ֆիզիկական անձի եկամուտների հաշվառումը կատարվում է իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից՝ անկախ դրա դիմաց հատուցումների ստացման (վճարման) պահից:

Հաշվեգրման մեթոդը կիրառվում է՝

- աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների նկատմամբ.
- այն եկամտի նկատմամբ, որը ստացվում է կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող 3 հարկային տարիների ընթացքում.

→ Դրամարկղային մեթոդ.

Դրամարկղային մեթոդը նշանակում է, որ ֆիզիկական անձի եկամուտների հաշվառումը կատարվում է այդ հատուցումների ստացման (վճարման) պահից՝ անկախ իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից:

Դրամարկղային մեթոդը կիրառվում է հաշվեգրման մեթոդում չնշված ցանկացած այլ եկամուտների նկատմամբ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Եթե արժութային հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ֆիզիկական անձին եկամուտները (այդ թվում՝ նվազեցվող) ստանալ արտարժույթով, ապա այդ եկամուտները վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ ելնելով այդ եկամուտների ստացման (ճանաչման) օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

Որպես ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք՝ հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը, որը հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԲՆԱՄԹԵՐԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Եթե ֆիզիկական անձն եկամուտը ստանում է բնամթերային (ոչ դրամական) ձևով, ապա դրա արժեքը որոշվում է ազատ (շուկայական) գների հիման վրա:

Բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտները կարող են լինել՝

→ գույքի (բացառությամբ՝ դրամական միջոցների) տեսքով.

→ աշխատանքի, ծառայության տեսքով.

→ մտավոր սեփականության արդյունքի տեսքով:

Բնամթերային ձևով արտահայտված ակտիվների արժեքները հաշվի են առնվում դրամով՝ ներքոնշյալ հերթականությամբ.

→ Եթե ֆիզիկական անձը բնամթերային ձևով եկամուտը ստանում է կազմակերպությունից, անհատ ձեռնարկատերից, նոտարից, ապա դրա արժեքը որոշվում է՝

- կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից եկամտի հաշվարկման (վճարման) ամսում այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով, ներառյալ՝ անուղղակի հարկերը),
- այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից հաշվարկմանը (վճարմանը) նախորդող ամսում այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով, ներառյալ՝ անուղղակի հարկերը),
- այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի մոտ դրանց ինքնարժեքի (սկզբնական (ձեռքբերման) արժեքի) և դրա նկատմամբ հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարով.

→ Եթե ֆիզիկական անձը բնամթերային ձևով եկամուտը ստանում է այլ աղբյուրներից, ապա դրա արժեքը որոշվում է՝

- այդպիսի կամ նույն կամ համանման գործարքների (բնամթերքի՝ ապրանքների, ծառայությունների, այլ ակտիվների) համար եկամտի ստացման ամսվան վերաբերող՝ հրապարակված վիճակագրական գներով.
- դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույն կամ համանման գործարքների համար եկամտի ստացմանը նախորդող ամսվան վերաբերող՝ հրապարակված վիճակագրական միջին գներով,
- դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույն կամ համանման գործարքների համար եկամտի ստացմանը նախորդող 12 ամսվան վերաբերող՝ հրապարակված վիճակագրական միջին գներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ 12 ամսվան նախորդող հաջորդական առաջին ամսվան վերաբերող՝ հրապարակված միջին գներով.
- վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում բնամթերային եկամուտը համախառն եկամտում հաշվի է առնվում եկամտի ստացման (վճարման) տարում այն ձեռք բերելու հնարավոր գնով:

3. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ՀԱՐԿԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԸ, ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ (ԾԱԽՍԵՐԸ)

Եկամտային հարկը հաշվարկվում է 5%, 10% կամ 20% դրույքաչափերով, կապված ֆիզիկական անձի ստացված հարկվող եկամտի տեսակից:

Մասնավորապես՝

5% ԴՐՈՒՅՔԱՉԱՓ

5% դրույքաչափով հարկվում է ֆիզիկական անձի ստացված՝

→ շահաբաժինը:

Ընդ որում, 5% դրույքաչափը կիրառվում է 2020թ.-ի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների ընթացքում ծավալած գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա:

Եթե ֆիզիկական անձը հանդիսացել է օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա 2017-2019թ.-ի համար վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով:

ՀՀ քաղաքացիների համար մինչև 2018թ.-ի, իսկ օտարերկրյա քաղաքացիների համար՝ մինչև 2017թ.-ի ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների ընթացքում ծավալած գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, ֆիզիկական անձանց ստացվող շահաբաժինները համարվել են նվազեցվող եկամուտ, այսինքն՝ չեն հարկվել:

10% ԴՐՈՒՅՔԱՉԱՓ

10% դրույքաչափով հարկվում են ֆիզիկական անձի ստացված՝

- Ռոյալթին,
- Բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց տոկոսները,
- Վարձակալական վճարները,
- Եթե ֆիզիկական անձի՝ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը գերազանցում է 60,0 մլն.դրամը, ապա գերազանցող մասի համար ֆիզիկական անձը լրացուցիչ հաշվարկում է եկամտային հարկ՝ 10% դրույքաչափով,
- Գույքի (բացառությամբ՝ կառուցապատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից օտարվող շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների) օտարումից ստացված եկամուտները
- Կենսաթոշակները, որոնք ստացվել են ՀՀ օրենսդրության շրջանակներում՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում ֆիզիկական անձի կողմից իր համար կամ ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին:
- Կանոնադրական (բաժնեհավաք կապիտալում) շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ) ձևով մասնակցությունը (ներդրումը) վկայող արժեթղթերի (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին և այլ) օտարումից ստացվող եկամուտները, եթե օտարումը կատարվում է այդ մասնակցությունը ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող 3 հարկային տարիների ընթացքում.

20% ԴՐՈՒՅՔԱՉԱՓ

20% դրույքաչափով հարկվում են ֆիզիկական անձի ստացված՝

- Աշխատավարձը և քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ծառայության մատուցումից կամ աշխատանքի կատարումից եկամուտները,
- Այլ տոկոսները,
- Կառուցապատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից օտարվող շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտները,
- Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները,
- Ֆիզիկական անձին հարկային գործակալի կողմից վճարվող պասիվ եկամուտները, եթե դրանց ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում այդ եկամուտները չեն վճարվել, բացառությամբ բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանն առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող տոկոսները,
- Այլ եկամուտները:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձի հաշվարկված տարեկան եկամտային հարկի գումարից նվազեցվում են՝ եկամտային հարկի այն գումարները, որոնք ֆիզիկական անձից պահվել (գանձվել) են օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Եկամտային հարկից նվազեցումները կարող են կատարվել միայն Օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափով հաշվարկվող եկամտային հարկի գումարները չգերազանցող չափերով:

Նվազեցումները կատարվում են օտարերկրյա պետության լիազոր մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա:

Տեղեկանքում պետք է նշված լինի այդ պետությունում հարկի վճարման տարեթիվը և փաստացի վճարված հարկի գումարը:

Ֆիզիկական անձը կարող է 2023թ.-ի հաշվետու տարվա և դրան հաջորդող 4 հաշվետու տարիների համար ՀՀ-ից դուրս ստացած կամ ստացման ենթակա մինչև 12,0 մլն. դրամ եկամուտների մասով՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան հաշվարկված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկանքներ չներկայացնել հարկային մարմին:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ֆիզիկական անձի վճարած եկամտային հարկից վերադարձվում (փոխհատուցվում) են.

- բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով ստացած հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարները, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է վարձու աշխատող.
- ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների որոշ մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում սովորողի (ուսանողի) ուսման վարձը, եթե վերջինս հանդիսանում է վարձու աշխատող ՀՀ քաղաքացի.
- Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների և ուսման վարձի փոխհատուցման գումարների վճարված եկամտային հարկի վերադարձից միաժամանակ օգտվելու իրավունք ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձը կարող է օգտվել դրանցից միայն մեկից:

Ֆիզիկական անձի վճարած եկամտային հարկից վերադարձվող (փոխհատուցվող) վերը նշված գումարները ֆիզիկական անձի համար եկամուտ չեն համարվում:

Հիպոտեկային հարկի մասով անհրաժեշտ է հաշվի առնել՝

- 2018թ. հունվարի 1-ից հետո հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարած տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից վարձու աշխատող ֆիզկական անձը կարող է օգտվել միայն 1 հիփոթեքային վարկի պայմանագրի մասով:
- Հիփոթեքային վարկով բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու գործարքի պայմանագրային արժեքը չպետք է գերազանցի 55,0 մլն. դրամը:
- Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարած տոկոսների գումարների չափով եկամտային հարկը վարձու աշխատողին վերադարձվում է եռամսյակային պարբերականությամբ:

- հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից կարող է օգտվել նաև վարձու աշխատող հանդիսացող հիփոթեքային վարկի համավարկառուն՝ բնակարանի (անհատական բնակելի տան) սեփականատեր (համասեփականատեր) հանդիսանալու դեպքում

- Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով հիփոթեքային վարկի վարկառուներին վերադարձման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը յուրաքանչյուր եռամսյակի համար չի կարող գերազանցել 1.5 մլն դրամը:

- Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարած տոկոսների գումարների վերադարձի (փոխհատուցման) մասով սահմանված են որոշ սահմանափակումներ, ելնելով անշարժ գույքի գտնվելու վայրից և հիպոտեկային վարկի ստացման ժամկետից: Հիպոտեկային վարկերի մասով վճարած տոկոսների գումարների չափով եկամտային հարկը չի վերադարձվում՝

  - 2022թ. հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում,

  - 2023թ. հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երկրորդ գոտում,

  - 2023թ. հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երրորդ գոտում,

  - 2025թ. հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված և վերը նշված կետերում չնշված գոտիներում:

- Հիպոտեկային վարկի շրջանակներում եկամտային հարկի վերադարձման իրավունքից արդեն իսկ օգտվող ֆիզիկական անձանց կողմից նշված իրավունքից օգտվելու համար ժամկետային սահմանափակումներ չկան:

Ուսման վարձի մասով անհրաժեշտ է հաշվի առնել՝

- Ֆիզիկական անձի կողմից սովորելու դիմաց վճարած ուսման վարձը կարող է փոխհատուցվել սովորողի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, եթե սովորողը ՀՀ քաղաքացի է,

- ուսումն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքում զետեղված ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական և կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագիր իրականացնող հաստատությունների ցանկում ներառված առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և կլինիկական օրդինատուրայում:

- Ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 18.06.2020թ.-ի N 1035-Ն որոշմամբ:

- Վճարված եկամտային հարկի գումարներից ուսման վարձի փոխհատուցման նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարվող ուսման վարձի գումարի վերադարձից կարող է օգտվել միայն մեկ մասնագիտություն ձեռք բերելու համար:

- Վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է 1 տարվա ընթացքում ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով, բայց ոչ ավելի, քան ուսման համար վճարված գումարը:

Ուսումնական տարին ներառում է բուհի ուսումնական պլանով սահմանված ուսումնառության ամիսները:

→ Սովորողի համար ուսումնական տարվա որևէ ամսում հաշվարկված աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

Շահաբաժինների մասով անհրաժեշտ է հաշվի առնել՝

→ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարները կարող են փոխհատուցվել, եթե շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի կողմից ներդրվում են շահաբաժին վճարող ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում:

→ շահաբաժին ստացած ֆիզիական անձին փոխհատուցվում են կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ներդրված ամբողջ գումարը, բայց ոչ ավելի, քան տվյալ անձի կողմից շահաբաժնի տեսքով ստացվող եկամուտներից շահաբաժին վճարելու հարկային տարվա ընթացքում ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կողմից վճարված եկամտային հարկի գումարները:

→ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարների փոխհատուցելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 28.09.2017թ.-ի N 1371-Ն որոշմամբ:

Հարկի փոխհատուցման համար ֆիզիկական անձը պետք է հարկային մարմին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- եկամտային հարկի փոխհատուցման համար դիմումը.
- անձը հաստատող փաստաթուղթը (ՀՀ քաղաքացու անձնագիրը /նույնականացման քարտը/), իսկ օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ օտարերկրյա քաղաքացու անձնագիրը կամ ՀՀ-ում օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը, կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.
- հաշվետու տարվա ընթացքում ռեզիդենտ կազմակերպության կողմից ֆիզիկական անձին վճարված շահաբաժինների և դրանցից պահված եկամտային հարկի վերաբերյալ տեղեկանքը.
- հաշվետու տարվա ընթացքում անձանց կողմից ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում կատարված գումարային ներդրումների չափի վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանքը՝
- կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում կատարված գումարային ներդրումները հաստատող փաստաթուղթը.
- բաժնեհավաք (փայահավաք) կապիտալում կատարված փոփոխությունների վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանում կատարված գրառումը հավաստող գրանցամատյանի համապատասխան քաղվածքը:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձի հաշվարկված տարեկան եկամտային հարկի գումարից նվազեցվում են հաշվետու տարում այդ ֆիզիկական անձի կողմից իր և իր ընտանիքի անդամների համար կատարված և հարկային հաշիվներով կամ հաշիվ վավերագրերով հիմնավորված սոցիալական ծախսերի առավելագույն չափերը չգերազանցող՝ փոխհատուցման ենթակա գումարները:

Սոցիալական ծախսեր են համարվում ՀՀ-ում՝

- գործող ապահովագրական ընկերություններից առողջության ապահովագրական փաթեթի ձեռքբերման ծախսերը.
- իրականացվող նախադպրոցական, տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի մասով կատարված ուսման վճարները:

Սոցիալական ծախսերի առանձին ուղղություններով սահմանված են առավելագույն չափեր՝

- առողջապահության գծով սոցիալական ծախսի համար՝ տարեկան առավելագույնը 50,0 հազ. դրամը
- կրթության գծով սոցիալական ծախսի համար՝ տարեկան առավելագույնը 100,0 հազ.դրամը:
- Այնուամենայնիվ, ֆիզիկական անձի՝ իր և իր ընտանիքի անդամների համար կատարված բոլոր ուղղություններով սոցիալական ծախսերի առավելագույն չափը կազմում է տարեկան 100,0 հազ. դրամ:

Վերը նշված՝ ֆիզիկական անձի վճարած եկամտային հարկից վերադարձվող (փոխհատուցվող) սոցիալական ծախսերը ֆիզիկական անձի համար եկամուտ չեն համարվում:

Սոցիալական ծախսերի մասով անհրաժեշտ է հաշվի առնել՝

- Սոցիալական ծախսերից օգտվելու իրավունք ունի այն ֆիզիկական անձը, որը տվյալ հաշվետու տարվա համար՝ եկամուտների հայտարարագրման նպատակով հարկային մարմին է ներկայացրել Հաշվարկը (Հայտարարագիրը):
- Սոցիալական ծախսերի փոխհատուցման նպատակով ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները և զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները): Ընտանիքի անդամ հանդիսանալը հիմնավորվում է հետևյալ փաստաթղթերով՝
  - ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայական.
  - ծնողի դեպքում՝ ծնողի՝ անձը հաստատող փաստաթուղթ և հայտարարատուի ծննդյան վկայական.
  - զավակի դեպքում՝ ծննդյան վկայական.
  - որդեգրողի, որդեգրվածի դեպքում՝ որդեգրելու կամ որդեգրվելու համապատասխան հիմքը հաստատող փաստաթուղթ:
- Սոցիալական ծախսերի փոխհատուցումը (վերադարձը) կարող է իրականացվել, եթե այդ ծախսերը հիմնավորված են Օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերով:

  Ֆիզիկական անձի կողմից կատարված սոցիալական ծախսերի հիմնավորման նպատակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում ֆիզիկական անձի ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարի առկայությունը պարտադիր է:

  Սոցիալական ծախսերի փոխհատուցման նպատակով հաշվարկային փաստաթղթում, բացի ծառայություն ստացող ֆիզիկական անձի կամ իր ընտանիքի անդամի տվյալներից, այդ թվում՝ ՀԾՀ-ից, պետք է ներառվեն նաև սոցիալական ծախսը կատարած ֆիզիկական անձի անձնական տվյալները, այդ թվում՝ ՀԾՀ-ն: